

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿԸ ԳԱՏԱՊԱՐՏԷ ՉԱՐԱՄԻՏ ՎԵՐԱԳՐՈՒՄՆԵՐԸ

Վերջերս հեռախոսի կայան մը, ինչպէս նաեւ կարգ մը երեսփոխանական թեկնածուներ Հայկական Միասնականութեան ձակարակին դէմ իրենց կատարած ապստեղեկատուական ընտրական քարուղչութեան ընթացքին, չինայելով Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Արամ Ա.ին, անոր անունով յայտարարեցին, թէ՛ «վեհափառը հաւասար հեռախոսութիւն կը պահէ երեսփոխանական բոլոր հայ թեկնածուներէն»:

այս աշխատի վարմունքին առիթով կաթողիկոսարանի դիւանը փութաց հրապարակել ստորեւ տրուած յայտարարութիւնը:

Այս առիթով հաստատեւք, որ ընտրարշաւի ընթացքին նեղ կացութեան մատուցելը չ'արդարացըներ իրականութեան աղաւաղումը ընդհանրապէս: Մասնաւորաբար դատապարտելի է Արամ Ա. կաթողիկոսին հետ հանդիպելէ ետք անոր արտայայտութիւններուն խեղաթիւրումը:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Լիբանանէն ներս այս օրերուն տեղի ունեցող խորհրդարանական ընտրութեանց առնչուած ընտրապայքարը յառաջացուցած է այնպիսի յոռի մըքննողորտ մը, ուր յանկուկան տեսնուին բարոյական սկզբունքներն ու չափանիշները: Դժբախտաբար, նման երեւոյթներ սկսած են Թափանցել նաեւ հայկեանքէն ներս: Արդարեւ, ընտրապայքարին կապուած աշխարհի գործընթացներու ու գործընթացներու ազդեցութեամբ կ'ըլլանք մ'ամուսնի, հեռատեսիլի ու ձայնասփիւռի ճամբով, ազանջալուր կը դառնանք այնպիսի արտայայտութիւններու որոնք խոտոր կը համեմատին մեր արժանիքներուն եւ ըմբռնումներուն ու մասնաւոր դուռ

կը բանան ներքին յարուածութիւններու ու պառակտումներու:

Վեհափառ հայրապետը քանի մը օր առաջ հայրաբար թելադրեց երբեք հայ քաղաքական կազմակերպչութիւններու վերջին մարմիններուն՝ հեռու մնալ ընտրապայքարի յառաջացուցած այն վնասաբեր մթնոլորտէն եւ միանգամընդմիջտ դադրեցնել ընտրապայքարի այն ոնք, որ կրնայ ընտրապայքարէն անդին միջկուսակցական հակադրութիւններ յառաջացնել, այդ ձեւով չլատելով մեր համայնքին ներքին միասնականութիւնը, հաւաքական կամքը ու գործունէ մասնակցութիւնը Լիբանանի քաղաքական կեանքին:

Այս շրջագծէն ներս կ'ուզենք կարեւորութեամբ յայտնել, որ այս օրերուն օտար թէ հայ մ'ամուսնի, հեռատեսիլի ու ձայնասփիւռի կազմակերպչութիւններ ինչպէս նաեւ երեսփոխանական ընտրութեանց թեկնածուներ եւ անհատներ վեհափառ հայրապետին արտայայտութիւնները կ'աշխարհապարտեն, եւ անոր կատարած հայրական թելադրութիւններուն, իր պարզած մտահոգութիւններուն եւ արտայայտած սկզբունքային յստակ տեսակետներուն գծով այնպիսի մեկնաբանութիւններ եւ նշխարներ կատարեն չարամտօրէն աշխարհի վերագրումներ, որոնք երբեք չեն համապատասխաներ իրականութեան: Այս վնասաբեր երեւոյթները անընդունելի է: Այս եւ այլ փորձեր պարզապէս կը միտին պառակտել յառաջացնել հայ կեանքէն ներս:

ԵԳԻՊՏԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՈՆՈՒԹԻՒՆ ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼԷԻ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻՆ ԹԱՓ ՏԱԼՈՒ ՇԱՄԱՐ

Պաղեստինեան իշխանութեան նախագահ Եասէր Արաֆատ երէկ յայտարարեց, որ Միջին Արեւելքի խաղաղութեան գործընթացին ճակատագիրը կախեալ է Երուսաղէմը պաղեստինցիներուն յանձնելու Խորաշէյխի պատրաստակամութենէն:

Եգիպտական «Ահրամ» օրաթերթին կողմէ հրատարակուած հարցազրոյցի մը մէջ, Արաֆատ ըսաւ, որ հարցը կախեալ է Խորաշէյխի վարչապետ Էհուտ Պարաթէն, որուն ժխտական կեցուածքը ապօրինի կը դարձնէ Երուսաղէմի մէջ խաղաղութեան եւ քրիստոնէական սրբափայտութիւնը կնքուած համաձայնագիրներուն, որոնց վերջինը Պարաթէն ստորագրեց Երուսաղէմի Շէյխի մէջ, աւելցուց ան:

Քի խաղաղութեան գործընթացին նոր թափ տալու հեռանկարով:

Պաղեստինացիները յայտնեցին, որ Մուսայարաքայտի Երկուշաբթի, Աղեքսանդրիոյ մէջ անջատ տեսակցութիւններ պիտի ունենայ Սուրիոյ արտաքին գործընթացին Խորաշէյխի արտաքին գործընթացին հետ: Խորաշէյխի արտաքին գործընթացին ապստեղական Երուսաղէմի - Ամի, Գահրի կիտի այնքան չ'իջարկի օր:

Եգիպտոս Միջին Արեւելքի խաղաղութեան գործընթացին մէջ բանալի դերակատարութիւն ունի:

Մուսայարաքանցեալ շաբաթ յայտարարած էր, որ Եասէր Արաֆատ կրնայ յետագայ անկախ Պաղեստինի յայտարարութիւնը: Ան նաեւ յստակ դարձուցած էր, որ արարները պիտի չ'զգիջին Երուսաղէմը Խորաշէյխի:

Միւս կողմէ, Խորաշէյխի արտաքին գործընթացին խաղաղութեան գործընթացին հարցընթացին, որ նախագահ Հիւսէյն Մուսայարաքայտ շարժումն ունեցնելու Գահրի մէջ պիտի հիւրընկալէ սուրիացի, պաղեստինցի եւ Խորաշէյխի պատասխանատուներ Միջին Արեւելք:

Պաղեստինցիներուն պատասխանը չ'ուշագու: Պաղեստինցի պիտաւոր բանագնաց Եասէր Ապտ Ռապպո յայտնեց, որ Խորաշէյխի ճակատութիւն չ'իջարկելու համար չ'իջարկի Այսրիոյ անանն մեծ մասերու կցումը եւ Երուսաղէմի վրայ Խորաշէյխի գերիշխանութեան պահպանումը:

Պաղեստինցիներուն պատասխանը չ'ուշագու: Պաղեստինցի պիտաւոր բանագնաց Եասէր Ապտ Ռապպո յայտնեց, որ Խորաշէյխի ճակատութիւն չ'իջարկելու համար չ'իջարկի Այսրիոյ անանն մեծ մասերու կցումը եւ Երուսաղէմի վրայ Խորաշէյխի գերիշխանութեան պահպանումը:

ՄՈՒՊԱՐԱՔԻ ՆԱԽԱՁԵՈՆՈՒԹԻՒՆԸ

Եգիպտացի պաղեստինացիները հարցընթացին, որ նախագահ Հիւսէյն Մուսայարաքայտ շարժումն ունեցնելու Գահրի մէջ պիտի հիւրընկալէ սուրիացի, պաղեստինցի եւ Խորաշէյխի պատասխանատուներ Միջին Արեւելք:

Պաղեստինցիներուն պատասխանը չ'ուշագու: Պաղեստինցի պիտաւոր բանագնաց Եասէր Ապտ Ռապպո յայտնեց, որ Խորաշէյխի ճակատութիւն չ'իջարկելու համար չ'իջարկի Այսրիոյ անանն մեծ մասերու կցումը եւ Երուսաղէմի վրայ Խորաշէյխի գերիշխանութեան պահպանումը:

ԷՄ. ԹԻ. ՎԻ. ՊԱՏԿԵՐԱՍՓԻՒՌԷՆ

Այսօր՝ Երկուշաբթի, 21 Օգոստոս 2000, Երեկոյան ժամը 8:30-ին ԷՄ. ԹԻ. ՎԻ. կայանէն, «Մեծը Մուրաֆ» յայտագիրի ներքին եւ Հայկական Միասնականութեան ձակարակ թեկնածուներ նախարար Արթուր Նազարեան, երեսփոխան ժողով Գասարեան եւ Գալոս Բագրատունի: Անոնք պիտի խօսին ընտրական հարցերու մասին:

ՕՐԻՆԱԿԵԼԻ ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Շաղկոպ եւ Տիգրան Սասունեան (Լոս Անճելէս) Համագրագիրի Հայագիտական Բարձրագոյն Հիմնարկին կը նուիրեն 20.000. տոլար առ ի գնահատանք հայագիտութեան անոր բերած նկատարին, կրթական եւ ուսումնական արդիւնաւոր գործունէութեան:

ԱԿՆԱՐԿ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՄԱՆԱԿԱՆ ՊԼՈՔԻՆ ՊԻՏԻ ԲՈՒՄԱՐԿԵՆՔ

Ընտրապայքարի այս օրերուն, ուր ցեխարձակումները, գրայարտութիւնները, ըսի-ըսանքները կը տիրապետեն քաղաքական բեմին, հարկ է լուսարձակել տակ բերել իրականութիւններ եւ ակնհայտ ընտրական հաշիւներով կատարուած անհիմն, յանալի ծիծաղելի յայտարարութիւնները:

Ուշագրութեան արժանի առաջին իրականութիւնը այն է, որ մեր պարագային Հայկական Միասնականութեան ձակարակ թեկնածուները իբրանահայութեան թեկնածուներն են: Ժիշդ է, որ անոնք տարբեր ընտրաշրջաններու մէջ ցանկակից են այլ թեկնածուներու, բայց անոնց աւելցնելու թիւերը իրենցարանին մէջ պիտի կազմէ հայկական երեսփոխանական պլոքը, այսինքն՝ լիբանանահայ համայնքին ներկայացուցիչը օրէնսդիր իշխանութեան մէջ:

Այս իրականութեան կը բիւի երկրորդը: Հայ ըուէրակողը, որ կուսակցութեան ալ պատկանի կամ հետեւորդը ըլլայ, պիտի փափաքի, որ իր ձայնը Ա. Ա. ՊՏԱԼԵԱՆ Շար. ք. էջ 2

Հետեւաբար, կը հրաւիրենք մեր ժողովուրդի բոլոր գաւակները հետեւելու 12 Յուլիսին վեհափառ հայրապետին ուղղած «Թոնեմութեան ու Միասնականութեան կոչ»ին:

- Հեռու մնալով Լիբանանի հայութեան միասնականութիւնն ու հաւաքական ուժը չլատել փորձող բոլոր քսակի երեւոյթներէն ու փորձերէն:

- Համախմբուելու մեր համայնքին ընդհանրական ու գերագոյն շահերուն եւ իրաւունքներուն շուրջ՝ մէկտէղ զննելով ամէն տեսակ հատուածական թէ անհատական շահ:

- Գործնապէս վերահաստատելով մեր ամբողջական գորակցութիւնը եղբայրական Սուրիոյ եւ Լիբանանի պատրաստութեան:

ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ 19 Օգոստոս, 2000 Անթիլիաս, Լիբանան



Վարչապետ Հըս եւ փոխ վարչապետ Սըր կ'ողջունեն Երկուշաբթի: Լուսանկարները՝ Պ. ՋՈՒՆԻՍԵԱՆԻ



Վարչապետ Հըս եւ փոխ վարչապետ Սըր կ'ողջունեն Երկուշաբթի: Լուսանկարները՝ Պ. ՋՈՒՆԻՍԵԱՆԻ

Հայկական Միասնականութեան ձակարակ քարուղչական յանձնախումբին կազմակերպութեամբ, Շաբաթ Երեկոյան, ժամը 9:00-ին սկսեալ Անթիլիասի «Կոլտըն Պիշ» լողաւայաններուն շուրջ տեղի ունեցաւ ընտրական մեծ ճաշկերոյթ մը, աւելի քան հինգ հազար հայորդիներու մասնակցութեամբ:

Ճաշկերոյթին ներկայ գտնուեցան Հ. Յ. Գ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչներ, Ս. Գ. Հ. Կ. Լիբանանի Շրջանի վարչապետ Մարտին անդամներ, վարչապետ Սելիմ Հըս, փոխ վարչապետ Միշի Սըր, Հայկական Միասնականութեան ձակարակ թեկնածուներ նախարար Արթուր Նազարեան, հայկական երեսփոխանական պլոքի ներկայացուցիչ Սեպուհ Տեպեան, Երեսփոխան Արթուր Նազարեան, Գալոս Բագրատունի, Ստեփան Ապաճեան, Միքայիլ Սեֆերեան, Պէյրութի «Ազգային Գործ», «Պէյրութի Չարակներ» եւ «Ազգային համախումբներ» ցանկերու անդամներ կրթութեան նախարար Մոհամէտ Եուսէֆ Պալտուն, Անիտ Թապալարա, Զուաւ Մախլուսի, Մոհամէտ Մաշուհ եւ Հապիվ Էֆրէմ, ինչպէս նաեւ լիբանանահայ կառույցներու, միութիւններու, մարմիններու ներկայացուցիչներ:

Առաջին խօսք անողը եղաւ Հ. Յ. Գ. «Աղբալեան» կոմիտէի անունով (արաբերէն) Սարգիս Կիրակոսեան: Ան նշեց, որ լիբանանահայութիւնը Լիբանանի հայրենիքին վերելքին եւ բարգաւաճման համար իր առաւելագոյնը կու տայ, որովհետեւ Լիբանանի շահերը կը գերադասէ համայնքային շահերէն: Կիրակոսեան ըսաւ, որ

Վարչապետ Հըս եւ փոխ վարչապետ Սըր կ'ողջունեն Երկուշաբթի: Լուսանկարները՝ Պ. ՋՈՒՆԻՍԵԱՆԻ

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԽԱՔ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ՝

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱԿԱՏԻ ՔԱՐՈՉՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆԻՆ

ՆԵՐԿԱՅՈՒԹԵԱՄԲ՝

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱԿԱՏԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐՈՒՄ

◆ Գեղարուեստական ձոխ յայտագիր

Տեղի կ'ունենայ Երկուշաբթի, 21 Օգոստոս 2000, Երեկոյան ժամը 8:30-ին, Պուրճ Լամուտի Զաղաքապետարանի դաշտին շրջակայքը:

AQUA SEVAN ՀԱՄԱԼԻՐ ԱՅՆՃԱՐԻ ՄԷՋ

ԿԱՐՁՈՒ DELUX ՇԱԼԱԵՐ (Շաբաթական կամ ամսական) Լժան կահաւորում

(60, 90 եւ 100 քառ. մետր տարածութեամբ) Արդիական կառոյց, լողաւազան, գեղատեսիլ վայր, անձնական կառատուն:

Պրակ հեռ. 03-714855 եւ 01-746972

«ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾ»Ի ՅԱՆԿԻՆ ԳՐՔՈՅԿԸ

Հրապարակի վրայ է Պէյրուսի Գրքերի Գրականության Գործընկերության կողմից հրատարակված «Ազգային Գործ»-ի ցանկի գրքերը, որոնք մեջ տեղ գտած են վարչապետ Սեյիմ Հրսի գլխավորած ցանկին ետք թեկնածուներուն՝ Սեյիմ Հրսի (սիւննի), Մոհամադ Եւսուֆ Պայտունի (շիի), Իսամ Նամաձնի (տիւրքի), Արթուր Նազարեանի (հայ առաքելական), Յակոբ Բազարյանի (հայ առաքելական), Ստեփան Ապաճեանի (հայ կաթոլիկ) եւ Ահմէտ Թապալանյանի (սիւննի) կենսագրականները՝ իրենց գունաւոր եւ մեծ լուսանկարներով, ինչպէս նաեւ ցանկին վրայ ֆոթոմը եւ ընտրութեան ընթացքին եւ պայմաններուն վերաբերող հակիրճ տեղեկութիւններ:

ՍՖԷՅՐ ԿԸ ԸՆՆԱԴԱՏԷ

Մարտին երևա Մար Նասրալլա Պոսթոս Սֆէյր պատրիարքը երէկ արտասանուած իր քարոզչի մէջ քննադատեց որեւէ գնով երեսփոխանական արձույթ ձեռք առնելու համար մրցակցութիւնը: «Ամէն ծառայութիւն, որ կը մատուցուի այլոց կամ հայրենիքին, պէտք է բիւր անկեղծ, անշահախնդիր եւ հաւատարմութիւն սերէն, ապա թէ ոչ անարժէք է, պարզ անէտուր է», ըսաւ ան. եւ աւելցուց. «Այն ինչ որ կը տեսնենք այս օրերուն, այս մրցակցութիւնը որեւէ գնով երեսփոխանական արձույթ ձեռք առնելու համար, իսկապէս անօրայի եւ ցաւալի է, որովհետեւ օրինական կը նկատուին հակառակորդը կործանող բոլոր պէնքերը, անհիմն ամբաստանութիւններ, սուտերը, պախարակելը, կաշառելը, ինչպէս որ քննուի. սուտ խոստումները, սպառնալիքները, լրատու միջոցներու կողմնակալութիւնը, եղբայրը եղբոր դէմ լարելը, այս բոլորը անընդունելի են եւ քստմանքի, ըսաւ ան: Սֆէյր ըսաւ, որ ընտրութիւններուն մասնակցելու կամ պանդխտ պոլիտիկէն կը քարոզուի հարցը կը ձգէ իրարաջան իրի իրի ինչպէս որ անհրաժեշտ է գիտակցութեան:»

ՄԱՀԱԶԴ

Համազգայինի Կեդրոնական Վարչութիւնը կը գուժէ իր նախկին տեղակալներին, հաւատաւոր եւ նուիրեալ համազգայնական:

ԿԱՐՊԻՍ ԳԷՈՐԳ ԶԱՐՊՈՅԵԱՆԻ

անակնկալ մահը. որ պատահեցաւ Կիրակի, 20 Օգոստոս 2000ին, սրտի տագնապի պատճառով:

ՄԱՀԱԶԴ

Հ. Յ. Գ. «Գարեգին Նժդեհ» կոմիտէն կը գուժէ իր շրջակի հաւատաւոր ընկերներէն:

ԿԱՐՊԻՍ ԳԷՈՐԳ ԶԱՐՊՈՅԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Կիրակի, 20 Օգոստոս 2000ին, սրտի տագնապի պատճառով:

ՄԱՀԱԶԴ

Տիկին Ժանկա շարպոյեան եւ գաւակները՝ Պէթի, Յօդիկ, Գէորգ, Արա

Տիկին Մարի շարպոյեան
Տէր եւ տիկին Գրիգոր շարպոյեան եւ գաւակները
Տէր եւ տիկին Ջոհրապ շարպոյեան եւ գաւակները
Տէր եւ տիկին Վարդգէս շարպոյեան եւ գաւակները
Տէր եւ տիկին Յարութի շարպոյեան եւ գաւակները
Տէր եւ տիկին Անթուան Գալկեան եւ գաւակները
Տէր եւ տիկին Յակոբ Գարպոյեան եւ գաւակները
Տէր եւ տիկին Յովհաննէս Մոմճեան եւ գաւակները
Տէր եւ տիկին Յակոբ Երզնկեան եւ ընտանիք եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, հօր, գաւակին, եղբոր եւ հարազատին:

ԿԱՐՊԻՍ ԳԷՈՐԳ ԶԱՐՊՈՅԵԱՆԻ (Ծնեալ՝ 1940)

անակնկալ մահը, որ պատահեցաւ Կիրակի 20 Օգոստոս 2000, երեկոյեան ժամը 7:00ին, սրտի տագնապի պատճառով:

Յուզարկաւորութեան մանրամասնութիւնները՝ հետագային:

- Ներկայ ընդունելի իբրեւ մահագր:
- Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը. Ջալլա. «Հարպոյեան» շէնք. 9րդ լարկ:

ՄԱՀԱԶԴ

Տէր եւ տիկին Յովսէփ Մարգարեան եւ գաւակները
Տէր եւ տիկին Էտի Գարապաշեան եւ գաւակները
Տէր եւ տիկին Սարգիս Գափանեան եւ գաւակները
Տէր եւ տիկին Ժորժ Աուն եւ գաւակները
Եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց հօր, մեծ հօր եւ հարազատին:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՆԱԶԱՐԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Կիրակի, 20 Օգոստոս 2000ին:

Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Երկուշաբթի, 21 Օգոստոս, կէսօրուան ժամը 12:00ին, Էշրեֆիէի Ս. Յակոբ եկեղեցոյ մէջ, ուր կ'ընդունուին մարմինը պիտի փոխադրուի Ֆրան Երզնկայի Ազգային գերեզմանատունը:

- Ներկայ ընդունելի իբրեւ մահագր:
- Ցաւակցութիւնները պիտի ընդունուին հանգուցեալին աղջկան՝ տէր եւ տիկին Սարգիս եւ իլիզապէթ Գափանեանի բնակարանը, Երկուշաբթի 21 եւ երեքշաբթի 22 Օգոստոսին:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԿՈՒՋԷ ԱԶԱՏ ԵՒ ՊԱՐԿԵՇՏ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Վարչապետ Սեյիմ Հրսի Շաբաթ օր ընդունեց խմբագիրներու սենտիքայի նախագահ Մըլիհէմ Քարամը. որուն կ'ընկերակցէր սենտիքայի խորհուրդի պատուիրակուիւնը: Հանդիպումէն ետք Քարամ յայտարարեց. թէ վարչապետը հաւատած է, թէ կառավարութիւնը նախաձեռնուի է, որ երեսփոխանական ընտրութիւնները ըլլան ազատ, պարկեշտ եւ անքեղ:

«Երկու բիծեր որոշ

սին. յայտնելով, թէ կը ծրարուի, որ ՄԱԿի ընդհանուր քարտուղարի խոստով պատուիրակ Թէրի Ռոտ Լարսըն եւ Լիբանանի ճարտարապետի, անտուրի եւ տնտեսութեան նախարար Նաւեր Սայիտի միասնաբար շրջապատյոմ մը կատարեն, եւ այցելեն մեծ պետութեանց ու արաբական մայրաքաղաքներ, այս ժողովի յաջողութեան ենթահող պատրաստելու համար:

ԶԳՈՒՇԱՆԱԼ ԿԵՂԾ ՄԱՐԳԱՐԷՆԵՐԷՆ

Խորհրդարանի նախագահ Նեպիհ Պրորի երէկ Այն Ըպրի մէջ արտասանեց խօսք մը, որուն մէջ կոչ ուղղեց «զոհուած ազգային կեղծ մարգարէներէն»:

Ան քննադատեց հարաւոր նկատմամբ կառավարութեան թերացումը եւ կոչ ուղղեց հարաւորներուն՝ մեծ թիւով մասնակցելու ընտրութիւններուն եւ քուէարկելու ազատօրէն, առանց մոռնալու, թէ հարաւոր դիմադրութիւնն է, եւ անիկա պէտք է ըլլայ բարգաւաճումի առանցքը:

«Կառավարութեան ուղղութիւնը կեղծանցած է ընտրութիւններուն վրայ», ըսաւ Պրորի երէկ հարաւորին Լիբանանի ազատագրութեան շրջաններուն մէջ կատարած իր շրջապատյոյն ընթացքին:

Շաբաթ գիշեր Սարաֆանտի մէջ Սուրիոյ նախկին նախագահ Հաֆէզ Ասատի անունով մարգարէ մրցաշարի բացումին կատարած իր խօսքին մէջ Պրորի մերժեց ազատութիւններու ամէն կաշկանդում, ընդգծելով, որ պետութեան արժէքը ժողովուրդին կողմէ անոր ազատ կամքով տրուած իրազօրութիւնն է: «Հօգը Լիբանան մը Սուրիոյ գորութեան ազգակ է եւ Սուրիա շահագրգռուած է Լիբանանի անկախութեան հօգորութեան եւ բարգաւաճման ամրապնդումով», ըսաւ ան:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Փնարակու համար կարգ մը տարածալուստիկներ Պէյրուսի հայ կաթողիկէ երեսփոխանական թեկնածուին վերաբերեալ, հայ կաթողիկէ պատրիարքարանը կու գայ այսու պաշտօնապէս յայտարարել. թէ երբեք չէ արտաստուած ի նոյապէս կամ ընդդէմ այս կամ այն անձին. որոշած ըլլալով հաւասար հեռուարութեամբ դիրքաւորուիլ ամէնուհանդէպ եւ յաջողութիւն մատուցելով արժանաւորագոյնին:

Ի ԿԻՒՆ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՍԱՆԱԿԱՆ ՊԼՈՔԻՆ ...

Շարունակուած Ա. Էջէն

խորհրդարանին մէջ լսելի դառնալով ապրուկերով, եւ ոչ հայ պոքի մը մէջ ծուարած անհատի մը քննադատութիւնը չձգուի իբրանահայ համայնքին հարցերուն քննարկումը: Հետեւաբար հայկական երեսփոխանական պոքը է՝ այն միակ մարմինը, որ ուժը ունի խորհրդարանին մէջ սեղանի վրայ դնելու եւ պաշտպանելու հայ համայնքին շահերը:

Կայ այլ իրականութիւն մը: 1953էն սկսեալ մինչեւ 1996ի ընտրութիւններուն հայ քրէտարկող իր քուէն տուած է հայկական երեսփոխանական պոքին. եւ ո՛չ անհատ թեկնածուներու: Արոպիտեւ պարսիս ճամբով հայ քուէարկող իր խորհրդարանական ներկայացուցիչներուն կու տայ աշխատանքի անբողջական ծրագրի մը ընդմէջէն հայ համայնքին շահերը պաշտպանելու իրաւասութիւնը:

Լիբանանահայ քուէարկողներուն այս ընտրանքը լուրնագներու, նշանախօսքերու արդիւնք չէ: Անիկա կը բխի խոր համուկութեան վստահութենէ, թէ՛ միայն ու միայն հայկական երեսփոխանական պոքը կրնայ պինք ներկայացնել խորհրդարանին մէջ, թէ՛ անհատաբար գործող հայ խորհրդարանականներու ձայնը շատ շուտ պիտի խեղդուի. լուսագոյն պարագային անոնց քայլերը կրնան միայն լծակներու վերածուիլ նոյնիսկ իրենց դէմ:

Հայ քուէարկողը իրապէս է այս իրականութիւններուն. ասոր փաստը տուած է նախորդ ընտրութիւններուն: Ան այլ կեցումաձք չի կրնար ունենալ նաեւ այս ընտրութիւններուն:

ԿՐՈՒԹՅՈՒՆ

Հըս նաեւ հաւատեց, որ Լիբանան կը շարունակէ հաղորդակցութիւններ ՄԱԿի եւ այլ կողմերու հետ, աշխատելով ապահովելու Իսրայէլի մէջ արգելափակում լիբանանացի պատանդներու ազատ արձակումը:

Պատանդներու հարապատեցումն պատկերասրահներ ընդունած ատեն Հըս անոնց նաեւ հաւատեց, որ ոչ մէկ առիթ կամ արարական ու օտար պատուիրակութիւններու հետ ունեցած է հանդիպում. որուն ընթացքին այս հարցը չէ արծարծուած եւ անոնցմէ չէ պահանջուած. որ ճշմունքները անոնցմէ վրայ պատանդներու ազատ արձակումն համար:

Վարչապետը Շաբաթ օր նաեւ այցելեց Սայտա, ուր տեսակցութիւն մը ունեցաւ Նաւարական շարժումի ղեկավար երեսփոխան Մուսթաֆա Սաատի հետ. ապա յայտարարեց, թէ կը մտադրուի յաջողութիւնը երեսփոխանական ընտրութիւններուն:

Ի ԿԻՒՆ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ

STUDIO **Lantern**

• Կը ստանձնէ ուրախ առիթներու video նկարահանումներ

Հեռ. 01-268866
Էլ 03-895399

ԾԱԽՈՒ ՅԱՐԿԱՐԱԺԻՆ

• Ամսնու թաղ. 2 նընջասեղանի եւ հիւրարան. «Արծիւ» շէնք, 5րդ լարկ. օժտուած մեքենակով: Հեռ. 01-249907:

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

• Տիկին Արեգակազ Պայիկեան եւ գաւակները շնորհակալութիւն կը յայտնեն բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեղջիկով կամ նուիրատուութեամբ մասնակցեցին իրենց ամուսնոյն եւ հօր՝ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԻՊԻԿԵԱՆԻ մահուան սուգին:

ԿՈՒՋՈՒԻՆ

• ELECTRONICS-ի փորձառու ալցելու մասնագետներ: Կ: Հեռ. 03-290944 եւ 01-581556:

ԿԱՇԱՌՔ ՏԱԼԸ ԿԱՄ ՎԵՐՅՆԵԼԸ ՅԱՆՅԱՆՔ Է

ԿՐՈՒԹՅՈՒՆ ԱՏՏՈՒՄ

Ընդհանուր դատախազ Ատնան Ատտուժ երէկ յայտնեց ճարտարագիտի մը մէջ հաւաստեց, որ դատախազութիւններն ու յատկապէս ընդհանուր դատախազութիւններն ընտրութիւններէն առաջ, անոնց ընթացքին եւ անոնցմէ ետք պիտի ճշտուին ու ճետաքննութիւն պիտի րանան ու ճետապնդեան ամէն արարք, որ քրէական օրէնքին կամ ընտրութեան օրէնքին մէջ նշուած է իբրեւ ապօրինի յանցանք:

«Քրէական օրէնքը ապօրինի հռչակած է կաշառք եւ պատմութիւնը ճշդած է կաշառողին ու կաշառուողին», ըսաւ Ատտուժ, աւելցնելով, որ «քաղաքական դրամ» կոչուած կաշառքն տարբեր է, անիկա ընտրական ծախսերն է, որոնց օժանդակ ճշդող օրինակներ չէ վաւերացուած ցող, իսկ այլ դրամաբուէտարկողի կամքին վրայ ազդելու նպատակով երբ կը գործածուի, ապա կը դառնայ քրէական յանցանք՝ կաշառք եւ այս յանցանքը կարելի է ապացուցել բոլոր միջոցներով:

Երեսփոխանական ընտրութեանց օրերուն ընդհանուր դատախազութիւնները ժամ առ ժամ պիտի ճետուին ընտրական գործընթացին, ընդունելու բոլոր գանգատները եւ ճետաքննութիւն կատարելու, երբ անհրաժեշտ է:

Ընտրական արշաւներուն ընթացքին յրատուական «սանձարձակութեան» վերջ դնելու մասին ներքին գործընթացները Միշէյ Մորի իրեն յղած նամակին մասին Ատտուժ ըսաւ, որ դատական իշխանութիւնը պիտի ճետուի յայտարարութիւններուն ու յրատուութեան, ստուգելու թէ վարկաբեկում եւ ցեխարձակում չկատարուի:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

• ՊՈՒՐԸ ՀԱՄԱՌՈՒՄ անտարակալներու միութեան նախագահ Փօլ Այանեան երէկ հրապարակած յայտարարութեամբ մը գրուած քննադատութիւնը ուղղած նախապետութեան նախագահ Էմիլ Լահուտի կողմէ յայտարարուած մ'օտեցում՝ ունենալու եւ քննադատեց ապահովական իրաւունքները, որոնք կը սպառնան ընտրական գործընթացին:

• ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ միջոցով շէյխ Մոհամէտ Ռաշիտ Գապալանի Շաբաթ օր նախագահ գօր. Էմիլ Լահուտի եւ վարչապետ Սեյիմ Հրսի ուղղած նամակներով, քննադատեց «Թեյէ Լիպան» ու այլ լրատու միջոցներ. որոնք կը հրահրեն ժողովուրդին մէջ հարցեր. յատկապէս քաղաքական հարցերուն իրաւունքով կրօնական եւ համայնքապատկան կայուններու վերաբերեալ խնդիրներ:

Քաղաքական գործընթացը. թէ այս ընթացքը գրգռութիւններ առաջացնելով կը սպառնայ թիքերի օժանդակութեան ու կայունութեան:

• ԵՐԵՍՓՈՒՍԱՆԱԿԱՆ ընտրութիւններուն թեկնածու Էմիլ Էմիլ Լահուտի կողմէ «Մուսաբապալ» օրաթերթին իրեն վերագրած այն յայտարարութիւնը, թէ երեսփոխան Նեման Ռաքիմ հաւանաբար պիտի պարտուէր ընտրութիւններուն: Ան հաւաստեց, որ Ռաքիմի ժողովրդականութիւնը պիտի ապահովէր անոր ընտրութիւնը. եթէ ան թեկնածու կերպանար:

• ԵՐԵՍՓՈՒՍԱՆ Պոսթոս շաբաթ յայտարարեց, որ յաջորդ խորհրդարանը կը համայնքէ վստահելի եւ ատակ տարբեր:

Հարկ ընկալուածքներու «գէշ» կառավարութիւնը. որ վստահաբար չեղած է արտագաղթը եւ ստեղծուած տնտեսական կեանքը:

• ԵՐԵՍՓՈՒՍԱՆ Թալալ Արալան Պատուալի. Ալէքի եւ Շուֆի քուէարկողներուն կոչ ուղղեց իրենց ձայները տալու «հաշտութեան եւ նորարարութեան, ինչպէս նաեւ «Շուֆը բոլորին» ցանկերուն:

«Անհրաժեշտ է քաղաքական կեանքը մարքել համայնքին ծաղկեղջիկութեան, անձնական շահախնդրութեան, բռնատիրութեան եւ զեղծարարութեան», ըսաւ ան:

Արալան ընկալուածքներու անհրաժեշտութիւնները եւ ցեխարձակումները միջոցով մ'ուղղու արշաւը, որ կը մատեն հակառակորդի շփոթն ու խուճապը:

ANSER TRAVEL կը ներկայացնէ **ԱԿՈՍՏԱՆ ԸՆԿԵՐԱԿՑ. կազմակերպութեամբ**

ԸՆՅԱՍՏԱՆ - ԵԱՐ 2000

ԱՄՐԱՆ ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԾՐԱՊՏՈՅՏԸ

ԴԵՊԻ ԸՆՅԱՍՏԱՆ ԵՒ ԱՐՑԱՆ

8 Սեպտեմբեր - 22 Սեպտեմբեր
15 Սեպտեմբեր - 22 Սեպտեմբեր
7 եւ 14 օրէպ աճերագանցելի յայտագիր
Պէյրոս - Երեւան - Պէյրոս օդանավով:

Մանրամասնութեանց եւ արձանագրութեանց համար դիմել՝ **ԳԱՆԹԱՐՃԵԱՆ հաստատութիւն՝ MASTER MALL**
Հեռ. 01-268850, 03-203533, 01-253434, ANSER TOURS 01-585562, 01-562045

SPONSERED BY
GALERIE VANLIAN, Dora Highway
TEL.- 01-241951, FAX.- 01-241953

ՏԵ՛Ր ԿԱՆԳՆԻՐ ԼԻԲԱՆԱՆԸ ԱՅՈՒԹԵԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՄՔԻՆ

ՀԱՅ ԺՈՂՈՎՈՐԴԸ ԵՒ ԱՐՈՒԵՍԻ ԱՆԵԱՐԸ ՄԵՑ ՏԱԳԱՆԴ ՍԸ ԿՈՐԱՆՑՈՒՑԻՆ

ՄԵԾԱՏԱԳԱՆԴ ՆԿԱՐԻՉ ԵՒ ՖՐԱՆՍԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԱՆԴԱՄ ԳԱՌՋՈՒ ՈՉ ԵՒՍ Է

Շարք, 12 Օգոստոսին, Փերիճեո քաղաքի հիանդա-նոցներն մեկուն մեջ իր մահկանացուն կնքեց հայու-թեան աշխարհառջակ գաւակներն. միջազգային համ-բախ տիրացած նկարիչ եւ Ֆրանսական Ակադեմիայի անդամ Գառզու, բուն անունով Գառնիկ Չուլուսեան:

Գառզու հողին յանձնուեցաւ անցեալ Չորեքշաբթի օր: Ան երկու տարիէ ի վեր հիւանդ էր, դադրած էր աշխա-տանքէ եւ մեկուսացած կ'ապրէր: Հաւանաբար այս մե-կուսացումն էր պատճառը, որ Ֆրանսական մամուլը մին-չեւ այդ օրը չէր հաղորդած իր մահուան լուրը:

Գառզու ծնած է Հայկ. 1 Յունուար 1907ին, Տիգրա-նակերտէն Գառթած ծնողներէ: Նախնական ուսումը ստա-ցած է Եգիպտոսի Գալուստեան վարժարանին մէջ: 17 տարեկանին ուսանողական կրթաթոշակ մը ստանալով անցած է Փարիզ եւ հետեւեւ է ճարտարապետութեան:

Ան արուեստի ասպարէզին մէջ առաջին անգամ մուտք գործած է իբրեւ երգիծանկարիչ: Ֆրանսական մամուլին կ'աշխատակցէր իբրեւ իւրայատուկ երգիծանկարիչ մը. որուն սակայն բուն կողմը նկարչութիւնն էր:

Գառզու իր առաջին ցուցահանդէսը տուած է 1939ին, այնուհետեւ. մինչեւ վերջերս մնալուն ներկայութիւն էր համաշխարհային նկարչութեան բեմին վրայ:

1977ի Դեկտեմբերին, Գառզու արժանացաւ Ֆրանսա-յի Գեղարուեստից ակադեմիայի անդամ ընտրուելու պատիւին: Այսպէս, Գառզու 4 Ապրիլ 1979ին ընդունուե-ցաւ Ակադեմիայի գմբէթին տակ եւ արտասաց իր ճա-ռը, որ բաւական աղմուկ բարձրացուց իր յայտնուոն ու ինքնատիպ տեսակետներով:

Գառզուի մահով կ'անհետանայ հայ ժողովուրդի ողջ-ւար օրերուն մէջ ծնած եւ ինքզինք ամբողջ աշխարհին պարտադրած մեծ գաւակ մը, որուն մասին արուեստի աշխարհը ըսելիք չատ բան պիտի ունենայ միշտ:

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ ՑՈՐԵՆ ԿԸ ՆՈՒԻՐԵՆ ԼԻԲԱՆԱՆԻ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Միացեալ Նահանգներու գիւղատնտեսութեան նա-խարարութիւնը անցեալ Ուրբաթ յայտնեց, թէ 67,500 թոն ցորեն պիտի նուիրէ Հայաստանի:

Նախարարութիւնը նաեւ յայտնեց, թէ Լիբանանի պի-տի տրամադրէ 73,000 թոն գիւղատնտեսական արտադ-րութիւններ, որոնք գլխաւորաբար բաղկացած պիտի ըլլան ցորենէ եւ սոյայի ձկնի: Արտադրութիւնները Հայաստանի եւ Լիբանանի ազատ շուկաներուն մէջ պի-տի վաճառուին եւ անոնց հասոյթը պիտի տրամադրուի գիւղատնտեսական արտադրութիւնը թարեւաւելու միջոցառումներուն: Լիբանանին տրուած սթանդարտ-թէնէն մաս մը նաեւ պիտի յատկացուի լիբանանեան համայնարաններուն մէջ կենսաարհեստագիտական ու-սումնասիրութիւններու:

Ցատկացումները կատարուած են Միացեալ Նահանգ-ներու գիւղատնտեսութեան նախարարութեան «Ֆուտ Ֆոր Փրոսէս» ծրագրին կողմէ: Անոնք պիտի ամբող-ջանան մինչեւ 2000ի վերջը:

ՈՒՍԱՆՈՂ ՇԻՆԱՐԱՐՆԵՐԸ ԱՐՑԱՆ ԿԸ ՄԵԿՆԻՆ

17 Օգոստոսին Լեւնա-յին Ղարաբաղի Հանրապե-տութիւն մեկնեցան Հա-յաստանի ութ բարձրա-գոյն ուսումնական հաս-տատութիւններու 20 եւ 25 հոգիներէ բաղկացած եր-կու ուսանողական ջոկատ:

Այս անուցութեամբ Հա-յաստանի Երիտասար-դական Հիմնադրամի գոր-ծադիր տնօրէն Արթուր Պողոսեան ըսաւ, թէ ուսա-նողներու առաջին խումբը պիտի աշխատէ Ասկերանի շրջանի Նորագիւղ գիւղին մէջ, երկրորդը՝ Մարտա-կերտի մէջ:

Ա Պողոսեան ըսաւ, որ Հայաստանի շինարարա-կան ջոկատները Հինգ տարիէ ի վեր աշխատանքի կը մեկնին Լեւնային Ղա-րաբաղ: Անոնք այնտեղէն իրազմաթիւ շնորհակալա-կան նամակներ ստացած են նախորդ տարիներուն ուսանողներուն կատարած յաւաքաշատանքին համար:

Ցայտենք, որ ջոկատ-ներուն մեկնումը իրակա-նացուցած են Համահայկա-կան Երիտասարդական Հիմնադրամն ու Հայաս-տանի մշակութի, երիտա-սարդութեան հարցերու եւ մարմնակրթութեան նա-խարարութիւնը:

ՀՐԱԶԵԱՅ ԱՃԱՌԵԱՆԻ ԴԻՄԱՔԱՆԴԱԿԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Երեւանի Հրաչեայ Ա-ճառեանի անուան համալր-սարանի մուտքին մօտ գտնուող պուրակին մէջ 18 Օգոստոսին տեղադրուե-ցաւ վեճանուն հայ գիտ-նական եւ լեզուաբան Հրաչեայ Աճառեանի (1876-1953) դիմաքանդակը (Տե-ղիմակ Արա Շիրազ):

Դիմաքանդակի բացման արարողութիւնը տեղի պի-տի ունենայ 1 Սեպտեմբե-րին՝ Գիտելիքի Օրը:

«ՈՒՔՐԱՆԻԱ ՊԱՏՐԱՍ Է ԽԱՂԱՂԱՐԱՐ ՈՒՐ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԳԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ»

ԿԸ ՅԱՅԱՐԱՐԵ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵՋ ՈՒՔՐԱՆԻՈՅ ԴԵՄՊԱՆԸ

17 Օգոստոսին Հայաստանի մէջ Ուքրանիոյ դեսպան Ալեքսանտր Պոժքո «Սնարք» լրատու գործակալութեան յայտնած է, որ Ուքրանիա պատրաստ է իր խաղաղա-պահ զորքերը Արցախ ուղարկելու:

«Մենք շահագրգռուած ենք դարարդեան խնդրի լուծմամբ՝ կողմերուն միջեւ խաղաղ բանակցութիւն-ներու ճամբով, եւ համոզուած ենք, որ բանակցութիւն-ներու իրբեւ արդիւնք պիտի ստորագրուի ընդհանուր հաշտութեան պայմանագիր մը» նշած է դեսպանը:

Ըստ Ուքրանիոյ դեսպանին, պիտի գայ ժամանակը, երբ խօսք պիտի ըլլայ պայմանագրի գրոյթներու իրա-կանացման եւ չկողք գտնուի ստեղծման մասին, որուն համար հաւանաբար չըջան պիտի ուղարկուի միջազգա-յին խաղաղարար զորագունդ մը:

Ալեքսանտր Պոժքո աւելցուցած է, որ այդ պարագա-յին Ուքրանիա չի բացուեր իր մասնակցութիւնը՝ եր-կու կողմերու համաձայնութեան պայմանով եւ ՄԱԿի ու ԵԱՀԿի որոշումին հիման վրայ:

«Աւելին՝ մենք շահագրգռուած ենք մեր ուժերուն ներածին չափ սպնելու, որուն կարգին նաեւ ուքրանա-կան խաղաղարար զորամասի մը տրամադրումով՝ դա-րարդեան տագնապի լուծման համար», ըսած է դես-պան Ալեքսանտր Պոժքո:

ԵԱՀԿԻ ԱՆԿԱՄ 16 ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅԻՉՆԵՐԸ ՄԱՍԵԱԿՅԵՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ ԶԵՌՆԱՐԿՆԵՐՈՒՆ

Շրջանին մէջ ապահովութեան եւ փոխադարձ վստա-հուութեան ամրապնդման նպատակով, 1999ի Վիեննայի փաստաթուղթին սահմանած պարտաւորութիւններուն ծիրէն ներս, Հայաստան 15-18 Օգոստոսին կազմակեր-պած էր հանդիպումներ: Այս հանդիպումներուն ըն-թացքին ԵԱՀԿի անդամ պետութիւններուն ներկայա-ցուցիչները այցելեցին ռազմաօդային խաբիսի եւ զօ-րամաս, ինչպէս նաեւ՝ ներկայ գտնուեցան նոր տեսակի սպառազինութեան ցուցադրման:

Ըստ պաշտպանութեան նախարարութեան լրատուա-կան եւ քարոզչական վարչութեան հաղորդած տեղե-կութիւններուն, Հայաստանի սղութին եւ վազգէն Մա-նուկեան Ռազմական Հիմնարկ այցելած, ինչպէս նաեւ՝ «Թայֆուն» համազարկային կրակի հրթիռային համա-կարգի ցուցադրութեան ներկայ գտնուած են ԵԱՀԿի անդամ 16 երկիրներէ մէկ կական ներկայացուցիչներ եւ Հայաստանի մէջ Միացեալ Նահանգներու, Յունաստա-նի եւ Զինաստանի դեսպանութիւններուն ռազմական կցորդներ:

ՀՐԻՍՏՈՒՅՐԵ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄ

«ԼԻՆՍԻ» ՀԻՄՆԱՐԿԸ 100 ՀԱԶԱՐ ՏՈՂԱՐԻ ՅԱՏԿԱՅՈՒՄ ՄԸ ԿԸ ԿԱՏԱՐԷ

Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան թեմի առաջ-նորդ Մուշեղ եպ. Մարտիրոսեան, թեմի Կրօնական ժողովն ռազմապիւն վարչութիւնը կը յայտնեն, թէ «Լին-սի» Հիմնարկութիւնը 7 Օգոստոսին 100 հազար տոյարի նուիրատուութիւն մը եւս կատարած է Ազգային առաջ-նորդարանին:

Ցայտենք, որ այս յատկացումը վերջին բաժինն է 1997ին «Լինսի» Հիմնարկութեան կողմէ կատարուած 500 հազար տոյարի նուիրատուութեան:

Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան թեմի առաջ-նորդ Մուշեղ եպ. Մարտիրոսեան հաստատեց, թէ այս գումարը եւս ամբողջութեամբ պիտի յատկացուի Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան հովանաւորութեան ներքեւ իրականացող բարեսիրական ծրագիրներուն եւ կարիքաւորներու հոգատարութեան աշխատանքներուն:

Մուշեղ եպ. Մարտիրոսեան վերոյիշեալ նուիրա-տուութեան աւիթով երախտագիտութիւն եւ շնորհա-կալութիւն յայտնեց «Լինսի» Հիմնարկութեան Հիմնա-դիր բարերար Քրրք Քրրքորեանի, ինչպէս նաեւ՝ Հիմ-նարկութեան տնօրէն ձկնա Այճեանի:

ԵՐԵՒԱՆԻ ՄԵՋ ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ԿԵՐՊՈՎ ՊԻՏԻ ՆՇՈՒԻ ՄՀԵՐ ՄԿՐՏՉԵԱՆԻ ՅՈՐԵԼԵԱՆԸ

Թատրոնի եւ շարժանկարի նշանաւոր դերասան Սիեր Սկրտչեանին (1930- 1993) ծննդեան 70ամեակին նուիր-ւած յոբելեանական հանդիսութիւնը տեղի պիտի ունենայ 4 Նոյեմբերին, Ալեքսանտր Սպենդիարեանի անուան օփե-րայի եւ պալիթ թատրոնի մէջ: Հանդիսութեան ծրագիրը պիտի պատրաստեն բեմադրիչներ Վլադիմիր Սկրտչեան, Երուսիմ Դազմազեան եւ Հրաչիկ Աշուղեան:

Այս յոբելեանական հանդիսութեան որոշումը կայացաւ Սիեր Սկրտչեանի 70ամեակի յոբելեանական յանձնախում-բին կողմէ: Յանձնախումբը նաեւ որոշեց արուեստագ-տին ապրած շնքին պատիւն (Կոմիտասի փողոց, թիւ 40) գետեղել յուշատախտակ մը. ինչպէս նաեւ Երեւանի մէջ փողոց մը եւ դպրոց մը. իսկ Գիւմրիի մէջ Անի թաղամասի արուեստի վարժարանը կոչել անոր անունով:

Երեւանի Շարժապատկերի եւ Թատրոնի հիմնարկին մէջ պիտի հաստատուի Սիեր Սկրտչեանի անունով կեր-թաթոշակ: Իսկ Մոսկուայի մէջ տեղի պիտի ունենայ անոր շարժապատկերներուն ցուցադրութեան շաբաթ:

Այս ծիրէն ներս, նաեւ նախատեսուած է հրատարակել արուեստագետին նուիրուած ծաւալուն ժողովածու մը:

ԲՐԻՏԱՆԱՅԻ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐ Կ'ԱՅՅԵԼԵՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԳԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Լեւնային Ղարաբաղի Հանրապետութեան արտաքին գործոց նախարարութեան տեղեկատուական եւ վեր-թուճական վարչութիւնը յայտնեց, թէ Լեւնային Ղարա-բաղի Հանրապետութեան վարչապետ Անուշաւան Դա-նիկեան ընդունած է Լոնտոնի Քինկզ քուլճի դասա-խօսներ Տով Լինչին եւ Էրիք Պոտեյլյոր, որոնք շրջա-նակէ են ծանոթանալու Նորհրդային Միութեան փոլ-գումէն ետք անկախութեան ուղին ընտրած երկիրներու հարցերուն:

Սակայն մասնաւորապէս յատուկ աշխատութիւն մը հրատարակելու նպատակով բրիտանացի գիտնական ներուն կը հետաքրքրեն Արցախի ներքին քաղաքական, ընկերային- տնտեսական եւ մշակութային կեանքի կողմ-նորոշիչները:

Արտայայտելով գիտնականներուն սօսնդակելու իր պատրաստակամութիւնը՝ Ա. Դանիկեան նշած է, որ Լեւնային Ղարաբաղի Հանրապետութեան իշխանու-թիւններուն առաջնահերթ խնդիրն է՝ վերականգնել խաբխած տնտեսութիւնը, ստեղծել նոր աշխատատե-ղիներ, բարելաւել բնակչութեան ընկերային պայմա-նները:

Ան աւելցուցած է, որ ներկային Արցախի մէջ կը կառուցուի ժողովրդավարական պետութիւն: Արցախը ունի բոլոր անհրաժեշտ պետական հաստատութիւննե-րը, եւ ժամանակի ընթացքին պիտի ջնջուին «չճանչըր-ւած հանրապետութիւն» հասկացութեան հետ առնչը-ւած խոչընդոտները:

Բրիտանացի գիտնականները մտադիր են հանդի-պումներ ունենայ Լեւնային Ղարաբաղի Հանրապետու-թեան իշխանութիւններու եւ ոչ կառավարական կազ-մակերպութիւններու ներկայացուցիչներուն հետ:

ԳԵՄՈՎԱԿԱՆԱԿԱՆ ԿՈՒՍԱՅՈՒԹԵԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ԾՐԱԳԵՐԸՆ ՄԵՋ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՏ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՊԵՐՈՒ ԶԱՐԳԱՅՈՒՄԻՆ ՄԱՍԻՆ ԲԱՆԱԶԵԻ

Հիմնուելով Ամերիկահայ Դեմոկրատներու Ղեկ-վար Նորհուրդին ներկայացուցած բանաձեւում վրայ՝ Դեմոկրատական Կուսակցութեան ընտրական ծրագր-րին մէջ ներառուած է Հայաստանի հետ տնտեսական կապերը զարգացնելու առաջարկները, այդ ուղղու-թեամբ նախագահական թեկնածու Այ Կորի յանձնա-ուսութիւնը, ինչպէս նաեւ՝ Հայաստանի ապահովութեան եւ տնտեսական զարգացման հարցերը:

Նշեալ բանաձեւում կ'ըսէ. «Ի մտի ունենալով, Հա-յաստանի ժողովուրդին պատմական տառապանքները եւ գլխաւորապէս ներկայ հայկական պետութեան կարիք-ներուն՝ ապահովութեան եւ տնտեսական աճի առու-մով, Այ Կոր եւ Դեմոկրատական կուսակցութիւնը յանձ-նառու են իրենց ծիգերը շարունակելու, որպէսզի կա-րելի ըլլայ վերջ մը դնել Ազգային յանձնարարական միջեւ Լեւնային Ղարաբաղի հարցով յարուածութեան եւ վերահաստատել Հայաստանի ու իր հարեւաններուն՝ ներառեալ թուրքիւն հետ յիւանապիտական, առեւտր-րական եւ տնտեսական կապերը: Այ Կոր ամանակած է յատուկ յանձնախումբի մը կազմութեան, որ պիտի նուիրուի Միացեալ Նահանգներու եւ Հայաստանի մի-ջեւ տնտեսական գործակցութեան խորացումին»:

Ըստ Կորի ընտրութեան համար աշխատող խմբակի նախագահ Մայքըլ Մահալեանի, ծրագրին մէջ այս բա-նաձեւին ներառումը ցոյց կու տայ Հայաստանի նկատ-մամբ Կորի բարեկամական մօտեցումը:

ՊՈԼՍՈՅ ՊԱՏՐԻԱՐՔԸ ԳԱՂՈՒԹԻՆ ՀԱՐՑԵՐԸ ԿԸ ՆԵՐԿԱՅԱՅՆԷ ԹՈՒՐԳԻՈՅ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

18 Օգոստոսին Պոլսոյ հայոց պատրիարք Մեսրոպ արք. Մուրաֆեան այցելած է Պոլսոյ կուսակալին եւ անոր ներկայացուցած գաղութը յուզող շարք մը հար-ցեր:

Նախապէս պատրիարքը Չորեքշաբթի օր հանդի-պում մը ունեցած էր նաեւ Թուրքիոյ փոխ վարչապետ Մեսուտ Երլըմազի հետ:

